Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 12 հուլիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Կ.Բալայանի, Վ.Պողոսյանի, քննության առնելով << քաղաքացի Արթուր Սաքունցի եւ մյուսների կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

. Պ Ա Ր Զ Ե Ց

<< քաղաքացիներ Արթուր Սաքունցը, Խաչիկ Շահբազյանը, Կարինե Այվազյանը, Սեւակ Դերձյանը, Վոլոդիա Աբազյանը եւ Էդգար Խաչատրյանը դիմել են Սահմանադրական դատարան, վիճարկելով «Տեղական հանրաքվեի մասին» << օրենքի 5 հոդվածի 2-րդ մասի դրույթների սահմանադրականությունը:

Դիմումը համապատասխանում է << Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4 եւ 5 մասերի, ինչպես նաեւ << սահմանադրական դատարանի կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է նաեւ սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմումատուները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում են, որ իրենց նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են << Սահմանադրության 2 եւ 107 հոդվածներին:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիր:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» << օրենքի 69 հոդվածի 6-րդ մասով, սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

<< քաղաքացիներ Արթուր Սաքունցի եւ մյուսների դիմումը՝ «Տեղական հանրաքվեի մասին» << օրենքի 5 հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել << Ազգային ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՐՈՒԹՅՈՒՆ